

գիվանդիտական պատվիրակ Ռուսաստան էր մեկնել 1786 թ. Պոտյոմկինին Ախալցխայի փաշայի սեպարատ համաձայնագրի առաջարկություններն ու Վրաստանի շահերը ներկայացնելու նպատակով: Սուլխան Քումանյանը լավ տպավորություն էր թողել Գ. Ա. Պոտյոմկինի վրա և վերջինս եկատերինա II-ին ուղղված 1783 թ. հոկտեմբերի 7-ի նամակում նրա մասին արտահայտվում էր որպես լուսավորյալ ու բազում շնորհներով օժտված անձնավորություն: Ուշագրավ է, որ Սուլխան Քումանյանի պատվերով է, որ Գալուս արքեմանդրիտը վրացերենի է թարգմանել Շ. Շահամիրյանի «Նոր տետրակը»: Ղուկաս կաթողիկոսը իր 1792 թ. օգոստոսի 16-ի Շ. Շահամիրյանին ուղղված նամակում գրում է. «Վասն առ Սուլխան դիւանն գրեալ թղթոց խնդրեալ էիր յուզարկել ի Քիֆլիս և զպատասխանին յուզարկել: Սուլխան դիւանն ի վաղուց առաքեցեալ գրով չերկրան Ռուսաց, զթուղին քո յուզարկեցաք ի Քիֆլիս առ եղբայրն նորա Մանուչար դիւանն՝ հասուցանել առ եղբայրն և նա թուղթ գրեալ առ մեզ՝ զպատասխանին թղթոց քո եղեալ էր ի մէջ նորա և խնդրեալ էր ի մէջ հասուցանել առ պ. Կարապետն...» (Դիւան հայոց պատմութեան. հ. Թ, Քիֆլիս, 1911, էջ 140):

Սուլխան Քումանյանի Ռուսաստան այցելության առթիվ Հ. Արղուիյանը Մինաս Լազարյանին գրած իր նամակում խնդրում է օժանդակել նրան, բացատրելով, թե «նորա գործոց յաջողութիւնն մեզ է պարծանք, ըստ որում մեր ազգ է» (ՄՄ, ձև. N 4496, թ. 176):

3 Գեորգի արքայազն, Հերակլ II-ի գահաժառանգը, հետագայում՝ Գեորգի XII, Վրաստանից թագավոր 1798—1800 թթ.:

4 Տեր Դավիթ ավագ քահանա Տեր Օհանյան, վրաց արքունիքի թարգմանիչ և գրագիր:

5 Այս պարբերությունից երևում է, որ Լոռու գավառի մասին Շահամիրյանի խնդրանքով Հերակլ II-ի՝ իր մահվանից քիչ առաջ կատարած կարգադրությունը, որ, ենթադրելի է, հենց ատորև հրատարակվող 1797 թ. նոյ. 20-ի հրովարտակն է (Հերակլը մահացել է 1798 թ. հունվարին), ուզարկվել է Հերակլի մահվանից հետո Գեորգի՝ թագավորի կողմից հայազգի Ռաֆայել Գանիրեզովի (Դինիրեկյանց) միջոցով, «հանգերծ տեղոյս նոյն ժամանական եղելովին՝ զբուսման» այսինքն՝ այդ ընթացքում այստեղ (խմա՝ Վրաստանում) կատարված իրադարձությունների մասին հաղորդումներով:

6 Վրաստանի ներկայացուցիչը («մինխատրը») Ռուսաստանում իշխան Գարսևան Ճավճավաձեն էր, որ նշանակվել էր ըստ 1783 թ. Գեորգիեյան դաշնագրի: Նրա գործունեության մասին տե՛ս Գ. Արղուիյանը. Ջահանգեան Ֆաշեշաձուկ Սեղեմֆոցոցծոցո՝ ժողջաճոցոծ, օծ., 1982.

7 Հայ ազատագրական շարժման համար կարևորագույն պայման էր դիտվում պատմական իր տարածքի վրա հայ ժողովրդի գերակշիռ գոյության փաստը և աշխարհացրիվ հայ զանգվածները Հայաստան վերագործնելու գործը: Այդ նպատակի իրականացման ուղին Մազրասի խրմբակի անդամները տեսնում էին հայ ժողովրդի ցրված զանգվածներին վրաց թագավորության սահմանների մեջ եղած հայկական գավառներում հավաքելու մեջ, ելնելով այն հանգամանքից, որ հայ և վրաց ժողովուրդների պատմական ճակատագրերն ու շահերը զգալիորեն համընկնում էին և, ըստ այդմ էլ, Վրաստանը շահագրգռված պիտի լիներ նման քայլի դիմելու: Հերակլ II-ի խրնդրանքով մի շարք ծրագրային խորհուրդներ շարադրելուց հետո, Շ. Շահամիրյանը 1787 թ. հոկտեմբերի 15-ին նրան գրած իր նամակում առաջարկում էր «օրինակ նամակի պահպանության», որը Հերակլը պիտի շնորհեր հայ ժողովրդին: Շ. Շահամիրյանի այդ առաջարկը լիովին պաշտպանություն է գտնում Հերակլ II-ի կողմից և վերջինս, աննշան սրբագրումներով Շահամիրյանի կազմած ուղերձի տեքստը վավերացնելով (1790 թ. դեկտեմբերի 4), առաջում է Հեղկաստան 1791 թ. սկզբներին: Այն, դատելով վրացերենով պահպանված օրինակի վրա եղած մակագրությունից, տպագրվել է 1792 թ. Հարություն Շամվոնյանի տպարանում 1000 օրինակ: Ուշագրավ է այստեղ այն, որ 1799 թ. ևս Գեորգի XII-ը հայտնում է Շահամիրյանի առաջարկած քաղաքականությունը շարունակելու իր պատրաստակամությունը, որպեսզի տարազրյալ հայությունը, այդ լիվում և Շահամիրյանի ժառանգները, վերագառնալով «ընդ եղբարս իրեանց՝ ընակեցին ի սպուհ՝ աշխարհս իրեանց»: